

ՀՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

Տեղեկատվական ամփոփագիր ֆիզիկական անձանց համար



Հրապարակման ամսաթիվ՝ ապրիլ, 2024

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Գործող պայմաններին ամբողջապես ծանոթանալու, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով այցելեք մեր ինտերնետային կայքը՝ www.hsbc.am, ցանկացած մասնաճյուղ կամ գաևգահարեք +374 60 655 000 հեռախոսահամարով:



Բովանդակություն

Բնակելի անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման վարկեր.....	4
Պայմաններ	10
ՀՀ դրամով վարկեր	11
ԱՄՆ դոլարով վարկեր	12
Էներգաարդյունավետ հիփոթեքային վարկեր	13
Ապահովում և ապահովագրություն.....	14
Վարկի տրամադրում	15
Վարկի վճարումներ	16
Կարևոր նշումներ	17
Կարևոր տեղեկատվություն վարկային պատմության վերաբերյալ ...	18
Պահանջվող փաստաթղթեր	19
Հավելված 1	21

Բնակելի անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման վարկեր, էներգաարդյունավետ հիփոթեքային վարկեր

Կրեդիտավորման պայմանագրի կնքումից առնվազն յոթ օր առաջ «Էլջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) Հաճախորդին է տրամադրում կրեդիտավորման պայմանագիր կնքելու առաջարկը և կրեդիտավորման պայմանագրի նախագիծը: Հաճախորդը կարող է կրեդիտավորման պայմանագիր կնքելու առաջարկն ընդունել յոթօրյա աշխատանքային ժամկետում /մտածելու ժամանակ/ այն ստորագրելու և առձեռն Բանկին վերադարձնելու միջոցով:

Վարկի նպատակը

Բնակելի անշարժ գույքի ձեռքբերում և/կամ վերանորոգում
էներգաարդյունավետ հիփոթեքային վարկերի դեպքում էներգաարդյունավետության B կամ ավելի բարձր ցուցանիշ ունեցող բնակելի անշարժ գույքի ձեռքբերում

Վարկի արժույթ

ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
---------	-----------

Վարկի տոկոսադրույք¹

Անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման վարկերը տրամադրվում են լողացող անվանակա տոկոսադրույքով, որը սահմանվում է ըստ վարկի արժույթի՝ հետևյալ բանաձևով.

Բանկի մանրածախ հաշվարկային տոկոսադրույք (U<S)



Տվյալ վարկատեսակի համար սահմանված հաստատուն մարժա

¹ Կախված վարկի ռիսկայնության գնահատումից՝ վարկի դիմումը կարող է հաստատվել ավելի բարձր տոկոսադրույքով:

Անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման վարկեր

Վրժույթ	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան փաստացի տոկոսադրույք
ՀՀ դրամ	9% + 4% = 13%, որտեղ՝ 9%-ը Բանկի՝ ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է, 4%-ը՝ հաստատուն մարժան ՀՀ դրամով ձեռքբերման և վերանորոգման վարկերի համար	Ձեռքբերման համար՝ 14.07%-17.37% Վերանորոգման համար՝ 14.22%-18.24%
	Plus և Status հաճախորդների ² համար գործում է արտոնյալ տոկոսադրույք՝ 9% + 3.5% = 12.5%, որտեղ՝ 9% -ը Բանկի՝ ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է, 3.5% -ը՝ հաստատուն մարժան ՀՀ դրամով ձեռքբերման և վերանորոգման վարկերի համար	Ձեռքբերման համար՝ 13.48% - 16.10% Վերանորոգման համար՝ 13.63%-16.97%
ԱՄՆ դոլար	3.2% + 6.8% = 10%, որտեղ՝ 3.2% -ը Բանկի՝ ԱՄՆ դոլարով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է, 6.8% -ը՝ հաստատուն մարժան ԱՄՆ դոլարով ձեռքբերման և վերանորոգման վարկերի համար	Ձեռքբերման համար՝ 10.75%-14.49%* Վերանորոգման համար՝ 10.92%-15.66%*
	Plus և Status հաճախորդների ² համար գործում է արտոնյալ տոկոսադրույք՝ 3.2% + 5.8% = 9%, որտեղ՝ 3.2% -ը Բանկի՝ ԱՄՆ դոլարով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է, 5.8% -ը՝ հաստատուն մարժան ԱՄՆ դոլարով ձեռքբերման և վերանորոգման վարկերի համար	Ձեռքբերման համար՝ 9.63%-12.68%* Վերանորոգման համար՝ 9.80%-13.86%*

² Հաճախորդի՝ Plus կամ Status բանկային ծառայությունների փաթեթներից հրաժարվելու կամ նշված փաթեթների պայմաններից որևէ մեկին չբավարարելու դեպքում արտոնյալ տոկոսադրույքը կդադարի գործել

* Փաստացի տոկոսադրույքը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով 2023թ հունիսի 9-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքը: Ընդ որում տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:

Էներգաարդյունավետ հիփոթեզային վարկեր

Վարկի արժույթ	Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք	Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույք
ՀՀ դրամ	12% $9\%+3\%=12\%$ Որտեղ՝ 9%-ը Բանկի՝ ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է, 3%-ը՝ Բանկի հաստատուն մարժան	8% $3.2\%+4.8\%=8\%$ Որտեղ՝ 3.2%-ը Բանկի՝ ԱՄՆ դոլարով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է, 4.8%-ը՝ Բանկի հաստատուն մարժան
ԱՄՆ դոլար	12.89%-14.95%	8.53%-11.02%**

** Փաստացի տոկոսադրույքը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով 2023թ օգոստոսի 28-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքը: Ընդ որում տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարծենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅՑԵԼԵՔ ԲԱՆԿԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՑԻՆ ԿԱՅՔ՝ www.hsbc.am:

Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել, եթե Բանկը վերանայի իր մանրածախ հաշվարկային տոկոսադրույքը (ՄՀՏ):

- ◆ ՄՀՏ-ի հաշվարկման և հետագա փոփոխման հիմքում ընկած են Բանկի կողմից սահմանված հիմնական և երկրորդային ցուցանիշները:
- ◆ ՀՀ դրամով ՄՀՏ-ի հիմքում ընկած հիմնական ցուցանիշը համապատասխան երկու ամսվա կտրվածքով ՀՀ բանկային համակարգի կողմից ՀՀ դրամով ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներից 181 օրից մինչ 1 տարի ժամկետայնությամբ ներգրավված ավանդների միջին կշռված տոկոսադրույքների պարզ միջին ցուցանիշն է:
- ◆ ԱՄՆ դոլարով ՄՀՏ-ի հիմքում ընկած հիմնական ցուցանիշը համապատասխան երկու ամսվա կտրվածքով ՀՀ բանկային համակարգի կողմից ԱՄՆ դոլարով ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներից 181 օրից մինչ 1 տարի ժամկետայնությամբ ներգրավված ավանդների միջին կշռված տոկոսադրույքների պարզ միջին ցուցանիշն է:
- ◆ ՄՀՏ-ն, առաջին հերթին, սահմանվում է՝ հիմք ընդունելով հիմնական ցուցանիշը և սահմանման օրվա դրությամբ հավասար է հիմնական ցուցանիշի արժեքին: ՄՀՏ-ն ենթակա է վերանայման տարեկան երկու անգամ:
- ◆ ՄՀՏ-ն ենթակա է փոփոխման, երբ վերանայման օրվա դրությամբ գործող ՄՀՏ-ի և հաշվարկված ցուցանիշի տարբերությունը բացարձակ արժեքով կազմում է 0.5 տոկոսային կետ կամ ավել: Այս պարագայում ՄՀՏ-ը հավասարվում է ցուցանիշի նոր արժեքին: Հակառակ դեպքում՝ այն մնում է անփոփոխ:
- ◆ Բանկի գործող մանրածախ հաշվարկային տոկոսադրույքի, դրա հիմքում ընկած ցուցանիշների, վերանայման պարբերականության, հաշվարկման, փոփոխման և կիրառման կարգի մասին առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար այցելե՛ք մեր ինտերնետային կայքը՝ www.hsbc.am, ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարե՛ք +374 60 655 000 հեռախոսահամարով:
- ◆ ՄՀՏ-ի փոփոխության/ճշգրտման դեպքում Բանկը պարտավորվում է Հաճախորդին տեղեկացնել փոփոխությունն ուժի մեջ մտնելուց առնվազն մեկ ամիս առաջ՝ հաճախորդներին ուղարկելով անհատական ծանուցումներ:

Լողացող անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել վարկի գործողության ընթացքում, սակայն ոչ ավել, քան տարին երկու անգամ: Լողացող անվանական տոկոսադրույքը չի կարող փոփոխվել ավելի քան 7 տոկոսային կետով վարկի գործողության ամբողջ ընթացքում՝ անկախ լողացող տոկոսադրույքի հաշվարկման հիմքում դրված ցուցանիշների փոփոխության չափից: Լախատեսված առավելագույն/ նվազագույն շեմը սահմանվում է վարկի անվանական տոկոսադրույքի նկատմամբ: Սույն պայմանն առկա է վարկային պայմանագրում:

Վարկի համար գանձվող պարտադիր վճարներ

Վարկի տրամադրման հետ կապված պարտադիր վճարներն են.

վարկի տրամադրման միանվագ վճար (առկայության դեպքում)

գրավի իրավունքի պետական գրանցման միանվագ պետական տուրք և վճար

Նոտարական ծառայության միանվագ վճար

Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրվող գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկանքի միանվագ վճար

գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման միանվագ վճար

գույքի ապահովագրության տարեկան վճար

գույքի գնահատման վճար*

Ընդ որում, տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման մեջ ներառված չեն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով սահմանված վճարները և ծախսերը:

Վարկի տրամադրման հետ կապված պարտադիր վճարները ենթակա են վճարման վարկառուի կողմից: Դրանց չափերը ներկայացված են սույն տեղեկատվական ամփոփագրի Հավելված 1-ում:

Պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր բացասական հետևանքների մասին տեղեկատվություն.

♦ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ԿԱՄ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՈՒՇԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՎՐԱ ԿԿԻՐԱՌՎԻ ՏՈՒԺՄԱԸՔ՝ 5% ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ԳՈՒՄԱՐԱԾ ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ:

♦ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՅՐ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ ԵՎ ԱՔՐԱՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ ՓԲԸ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԱՆՑ ԴԱՌՆԱԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ՈՐԸ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԱՐԿԱՅԻՆ

ՊԱՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԵՎ ԿԱՐՈՂ Է ԱՅՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԽՈՉՋՆԴՈՏ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ: ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԻՐԱՌԵԼԻ Է ՆԱԵՎ ՀԱՄԱՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵՎ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ:

♦ ՀԱՃԱՆՈՐԴԸ/ԳՐԱՎԱՍՏՈՒՆ ԿԱՐՈՂ Է ՋՐԿԿԵԼ ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ՝ ԱՅՐ ԹՎՈՒՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ, ԵԹԵ ՉԿԱՏԱՐԻ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԻ ԲԱՆԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՏԱՆՁՆԱԾ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

* Վերանորոգման վարկերի համար վարկի գումարի տրամադրումից հետո 6 ամսվա ընթացքում պետք է ներկայացվի կատարված վերանորոգման մասին Բանկի կողմից ընդունելի անկախ գնահատող կազմակերպության եզրակացությունը:

♦ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՅՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԶԿՍՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ՊԱՏԵՆՃ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎՃԱՐՈՒՄԸ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՌԱՆՑ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԲՈՆԱԳԱՆՁԵԼ ԵՎ ԻՐԱՑՆԵԼ ԳՐԱՎԱՐԿՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՅՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒՂՂԵԼ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՄԱՆԸ:

♦ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՅՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԲԱՎԱՐԱՐ ԶԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՐՎԵԼ ՎԱՐԿԱՌՈՒԻ/ ՀԱՄԱՎԱՐԿԱՌՈՒԻ/ ԵՐԱՇԵՍԱԿՈՐԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ՝ ՀՀ ՕՐԵՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ:

Տեղեկատվություն երաշխավորի համար

Երաշխավորություն տրամադրելիս երաշխավորը պետք է գիտակցի երաշխավորության տրամադրման հետևանքները, այդ թվում՝ պարտապահի կողմից իր պարտավորությունը չկատարելու դեպքում պարտավորության, տույժերի ու տուգանքների ամբողջական կատարումը երաշխավորի կողմից, վարկառուի կողմից իր պարտավորությունը չկատարելու դեպքում երաշխավորի վարկային պատմության վատանալը, ընդհուպ մինչև երաշխավորի գույքից գրկվելը:

Վարկի վաղաժամկետ մարում

Հաճախորդն իրավունք ունի վաղաժամկետ մարելու վարկի գումարը կամ դրա մի մասը՝ Բանկին համապատասխան հանձնարարական տալով: Վարկի վաղաժամկետ մարում կատարելու դեպքում Բանկի կողմից համամասնորեն նվազեցվում են կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի եկամուտը ձևավորող վճարները, այդ թվում՝ վարկի տրամադրման միանվագ վճարը:

Վարկի հիմնական գումարի վաղաժամկետ մարում կատարելու դեպքում Բանկը կարող է Հաճախորդի ընտրությամբ՝

վաղաժամկետ մարված գումարին համամասնորեն նվազեցնել ամսական վճարումների չափը՝ թողնելով կրեդիտի մարման ժամկետն անփոփոխ

կամ

նվազեցնել վարկի մարման ժամկետը՝ ամսական վճարումների չափը թողնելով անփոփոխ:

Վարկառուն պայմանագրային տարվա որևէ պահի կարող է վաղաժամկետ մարել այդ պայմանագրային տարվա համար մարման ժամանակացույցի համաձայն մարման ենթակա վարկի մայր գումարն առանց տուգանքի: Սույն մասի կիրառման նպատակով Պայմանագրային տարի է համարվում կրեդիտավորման պայմանագրի կնքման ամսաթվին հաջորդող յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածը:

Վարկի հիմնական գումարի վերը նշված չափից ավելի վաղաժամկետ մարում կատարելու դեպքում Բանկը կարող է կիրառել տուգանք՝

վարկի վաղաժամկետ մարված գումարի առավելագույնը 0.6 տոկոսի չափով,	եթե վաղաժամկետ մարումը տեղի է ունենում կրեդիտավորման պայմանագրի գործողության առաջին տարվա ընթացքում
վարկի վաղաժամկետ մարված գումարի առավելագույնը 0.4 տոկոսի չափով,	եթե վաղաժամկետ մարումը տեղի է ունենում կրեդիտավորման պայմանագրի գործողության երկրորդ տարվա ընթացքում
վարկի վաղաժամկետ մարված գումարի առավելագույնը 0.2 տոկոսի չափով,	եթե վաղաժամկետ մարումը տեղի է ունենում կրեդիտավորման պայմանագրի գործողության երրորդ տարվա ընթացքում:

Պայմաններ

Նվազագույն պայմաններ

Դուք կարող եք դիմել բնակելի անշարժ գույքի ձեռքբերման կամ վերանորոգման վարկ ստանալու համար, եթե բավարարված են հետևյալ պահանջները.

Աշխատավարձային հաշվի առկայության դեպքում

- | | | |
|---|-----|---|
| <ul style="list-style-type: none"> ◆ Ունեք բանկային հաշիվ Բանկում, առնվազն 3 ամիս աշխատում եք Ձեր ներկայիս գործատուի մոտ, և Ձեր ամսական զուտ աշխատավարձը կազմում է նվազագույնը 200 000 ՀՀ դրամ (կամ 500 ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում): Ընդ որում, Ձեր աշխատավարձը պետք է փոխանցվի Բանկում սպասարկվող Ձեր հաշվին վարկի տրամադրումից հետո (եթե աշխատավարձի փոխանցումը չի պահանջվում Բանկի կողմից մինչև վարկի տրամադրումը³): | Կամ | <ul style="list-style-type: none"> ◆ Ունեք բանկային հաշիվ որևէ այլ բանկում, անընդմեջ աշխատում եք առնվազն 3 ամիս, և Ձեր աշխատավարձը վերջին 3 ամսվա ընթացքում փոխանցվել է Ձեր հաշվին, և Ձեր ամսական զուտ աշխատավարձը կազմում է նվազագույնը 250 000 ՀՀ դրամ (կամ 600 ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում): |
|---|-----|---|

Ոչ աշխատավարձային հաշվի առկայության դեպքում

- | | | |
|---|-----|--|
| <ul style="list-style-type: none"> ◆ Ունեք առնվազն 3 ամսվա բանկային պատշաճ պատմություն Բանկում, և Ձեր հաշիվների վերջին 3 ամիսների միջին ամսական մնացորդը, ինչպես նաև վերջին ամսվա միջին մնացորդը կազմում է նվազագույնը 200 000 ՀՀ դրամ (կամ 500 ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում): | Կամ | <ul style="list-style-type: none"> ◆ Ունեք առնվազն 3 ամսվա բանկային պատշաճ պատմություն ՀՀ տարածքում գործող որևէ այլ բանկում, և Ձեր հաշիվների վերջին 3 ամիսների միջին ամսական մնացորդը, ինչպես նաև վերջին ամսվա միջին մնացորդը կազմում է նվազագույնը 250 000 ՀՀ դրամ (կամ 600 ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում): |
|---|-----|--|

³ Դուք կարող եք փոխանցել Ձեր աշխատավարձը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում սպասարկվող Ձեր բանկային հաշվին: Աշխատավարձը Բանկում սպասարկվող հաշվին փոխանցելու հետ կապված մանրամասներին կանոնադրված վարկի հաստատման գործընթացի ժամանակ:

ՀՀ դրամով վարկեր

Սույն վարկատեսակը հասանելի է ՀՀ քաղաքացիներին կամ ՀՀ ռեզիդենտներին⁴:

	Ձեռքբերման վարկ	Վերանորոգման վարկ
Գումար⁵	5 - 200 միլիոն ՀՀ դրամ	3 - 35 միլիոն ՀՀ դրամ
Ժամկետ⁶	24 - 240 ամիս	24 - 120 ամիս
Վարկի տրամադրման վճար (միանվագ)	Վարկի գումարի 1% (0.5% Plus և Status հաճախորդների համար), առավելագույնը՝ 200,000 ՀՀ դրամ:	Վարկի գումարի 1% (0.5% Plus և Status հաճախորդների համար), առավելագույնը՝ 100,000 ՀՀ դրամ:
	Վարկի տրամադրման վճարը կգանձվի վարկառուի հաշվից վարկի տրամադրման օրը:	
Վարկ-գրավ առավելագույն հարաբերակցություն⁷	Ձեռքբերվող գույքի գնահատված արժեքի մինչև 90%-ը⁸: Վարկի գումարը հաշվարկվում է գնահատման ակտի համաձայն գույքի գնահատված շուկայական արժեքի և գույքի ձեռքբերման արժեքի մեծություններից նվազագույնի հիման վրա:	Վերանորոգվող գույքի գնահատված արժեքի մինչև 50%-ը:
Կանխավճար	Սկսած 10%-ից	Կիրառելի չէ

⁴ Սույն վարկատեսակի համար ՀՀ ռեզիդենտ են համարվում այն անձինք, ովքեր առնվազն մեկ տարի բնակվում են ՀՀ-ում՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

⁵ Վարկի գումարի չափը կախված է նաև Բանկի կողմից սահմանված՝ վարկառուի ունեցած բոլոր վարկերի գծով մարումների և եկամտի հարաբերակցությունից:

⁶ **Վարկառուի նվազագույն տարիքը պետք է լինի 18 տարեկան: Վարկառուի տարիքի և վարկի ժամկետի հանրագումարը չի կարող գերազանցել 65 տարին:**

⁷ Կախված է տարբեր գործոններից, այդ թվում՝ գույքի գնվելու վայրից (Երևանում/Երևանից դուրս), անշարժ գույքի ձեռքբերման վարկի դեպքում՝ նաև լրացուցիչ գրավի առկայությունից (գույք, գնման իրավունք և դրամական միջոցներ) և այլն:

⁸ **90% վարկ-գրավ հարաբերակցության դեպքում վարկի գումարը չի կարող գերազանցել 100 միլիոն ՀՀ դրամը:**

ԱՄՆ դոլարով վարկեր

Սույն վարկատեսակը հասանելի է միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար (բացառությամբ՝ ՀՀ ռեզիդենտ համավարկառու ունենալու դեպքի):

Ձեռքբերման վարկ		Վերանորոգման վարկ
Գումար⁹	10 000 - 400 000 ԱՄՆ դոլար	6 000 - 70 000 ԱՄՆ դոլար
Ժամկետ¹⁰	24 - 240 ամիս	24 - 120 ամիս
Վարկի տրամադրման վճար (միանվագ)	Վարկի գումարի 1% (0.5% Plus և Status հաճախորդների համար), առավելագույնը՝ 200,000 ՀՀ դրամ	Վարկի գումարի 1% (0.5% Plus և Status հաճախորդների համար), առավելագույնը՝ 100,000 ՀՀ դրամ
	Վարկի տրամադրման վճարը կգանձվի վարկառուի հաշվից վարկի տրամադրման օրը: Արտարժույթային հաշվից գանձման դեպքում կիրառվում է տվյալ արժույթի համար Բանկի կողմից սահմանված համապատասխան փոխարժեքը:	
Վարկ-գրավ առավելագույն հարաբերակցություն¹¹	Ձեռքբերվող գույքի գնահատված արժեքի մինչև 85%-ը¹²: Վարկի գումարը հաշվարկվում է գնահատման ակտի համաձայն գույքի գնահատված շուկայական արժեքի և գույքի ձեռքբերման արժեքի մեծություններից նվազագույնի հիման վրա:	Վերանորոգվող գույքի գնահատված արժեքի մինչև 50%-ը
Կանխավճար	Սկսած 15%-ից	Կիրառելի չէ

⁹ Վարկի գումարի չափը կախված է նաև Բանկի կողմից սահմանված՝ վարկառուի ունեցած բոլոր վարկերի գծով մարումների և եկամտի հարաբերակցությունից:

¹⁰ **Վարկառուի նվազագույն տարիքը պետք է լինի 18 տարեկան: Վարկառուի տարիքի և վարկի ժամկետի հանրագումարը չի կարող գերազանցել 65 տարին:**

¹¹ Կախված է տարբեր գործոններից, այդ թվում՝ գույքի գնակելու վարկից (Երևանում/Երևանից դուրս), անշարժ գույքի ձեռքբերման վարկի դեպքում՝ նաև լրացուցիչ գրավի առկայությունից (գույք, գնման իրավունք և դրամական միջոցներ) և այլն:

¹² **181-240 ամիս վարկի ժամկետը և 70%-85% վարկ-գրավ հարաբերակցությունը կիրառելի է միայն, երբ վարկի առավելագույն գումարը չի գերազանցում 250 000 ԱՄՆ դոլարը:**

Էներգաարդյունավետ հիփոթեքային վարկեր

Վարկի ժամկետ	24-300 ամիս
Վարկի տրամադրման միանվագ վճար	Չի կիրառվում
Վաղաժամկետ մարման տուգանք	Չի կիրառվում
Քեշբեք (Cash Back)	Վարկի առաջին երեք օրացուցային տարիների ընթացքում Բանկը հաճախորդի բանկային հաշվին կվերադարձնի վարկի վճարված տոկոսների 5%-ը (վերադարձի առավելագույն գումարը կազմում է 100,000 ՀՀ դրամ ¹³):

Կարևոր նշում

Բացի վերոնշյալ առանձին պայմաններից՝ Էներգաարդյունավետ հիփոթեքային վարկերի մյուս պայմանները նույնն են, ինչ բնակելի անշարժ գույքի ձեռքբերման վարկերի համար:

Կարևոր տեղեկատվություն ԱՄՆ դոլարով վարկերի վերաբերյալ

ԱՄՆ դոլարով վարկատեսակը հասանելի է միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար (բացառությամբ՝ ՀՀ ռեզիդենտ համավարկառու ունենալու դեպքի):

ԱՄՆ դոլարով վարկը կարող է տրամադրվել միայն վերոհիշյալ այն հաճախորդներին, ովքեր ունեն եկամտի աղբյուր ԱՄՆ դոլարով (ամբողջական կամ մասնակի), կամ որոնց եկամուտը ՀՀ դրամով է, սակայն ճշգրտվում է ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի տատանումների դեպքում: Բանկը կարող է

պահանջել եկամտի աղբյուրը հավաստող լրացուցիչ փաստաթղթեր:

ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում վարկի հաշվեգրված տոկոսագումարները կարող են վճարվել ՀՀ դրամով կամ ԱՄՆ դոլարով՝ համաձայն Հաճախորդի կողմից տրված գրավոր հանձնարարականի: ՀՀ դրամով վճարելու պարագայում փոխարկումն իրականացվում է մարման պահի դրությամբ Բանկի կողմից սահմանված արտարժույթի համապատասխան փոխարժեքով:

ԱՄՆ դոլարով վարկի դիմելիս անհրաժեշտ է ընդունել կշռադատված որոշում, քանզի արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են էական ազդեցություն ունենալ փաստացի մարվող գումարների և Ձեր վարկային պարտավորությունների մեծության վրա:

¹³ Cashback-ից օգտվելու համար իրավասու են բոլոր այն հաճախորդները, ովքեր գումարի վերադարձի օրը չունեն ժամկետանց պարտավորություններ: Վճարված տոկոսների 5%-ի վերադարձը կկատարվի յուրաքանչյուր օրացուցային տարվա հունվարին:

Ապահովում և ապահովագրություն

- ◆ Անշարժ գույքը գրավադրվում է Բանկի օգտին՝ մինչև վարկի ամբողջական մարումը:
 - ◆ Անշարժ գույքի ձեռքբերման վարկի դեպքում Հաճախորդը (այսուհետև՝ վարկառու) գրավադրվող գույքի նկատմամբ պետք է ունենա սեփականության իրավունք: Եթե վարկը տրամադրվում է առաջնային շուկայից գնվող անշարժ գույքի ձեռքբերման համար, և այն կառուցման փուլում է գտնվում (այսինքն՝ դեռևս բացակայում է սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը), որպես վարկի ապահովում պետք է գրավադրվի որևէ այլ բնակելի անշարժ գույք: Սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի տրամադրումից հետո ձեռքբերված անշարժ գույքը պետք է գրավադրվի Բանկի օգտին՝ գրավադրված այլ գույքի փոխարեն: Անշարժ գույքի ձեռքբերման փաստաթղթերը (առուվաճառքի պայմանագիր, սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական և այլն) պետք է հնարավորինս շուտ տրամադրվեն Բանկին գրավադրման գործընթացը սկսելու նպատակով:
 - ◆ Գրավադրված անշարժ գույքը պետք է ապահովագրվի՝ օգտվելով Բանկի կողմից ընդունելի ապահովագրական ընկերությունների ծառայություններից: Ապահովագրական պոլիսը պետք է վերականգնի յուրաքանչյուր տարի վարկային պայմանագրի գործողության ողջ ընթացքում:
- Եթե վարկառուն չի ապահովում գույքի ապահովագրումը, ապա Բանկն ինքնուրույն կիրականացնի ապահովագրությունը՝ վարկառուի հաշվին:** Ապահովագրության վճարի վերաբերյալ տեղեկատվությունը և Բանկի կողմից ընդունելի ապահովագրական ընկերությունների ցանկը ներկայացված է սույն տեղեկատվական ամփոփագրի Հավելված 1-ում:
- ◆ Ապահովագրական հատուցման շահառուն վարկառուն է:
 - ◆ Գույքի ապահովագրությունը կատարվում է գույքի ամբողջ արժեքի կամ վարկի գումարի չափով՝ ըստ վարկառուի ցանկության:
 - ◆ Գույքի արժեքի մի մասի չափով ապահովագրության դեպքում ապահովագրական հատուցումը կվճարվի ապահովագրական գումարի և գույքի ամբողջական շուկայական արժեքի հարաբերակցության համամասնությամբ:
 - ◆ **Գրավի պայմանագրով նախատեսված գրավի առարկայի ապահովագրության պայմանները խախտելու դեպքում Բանկն իրավունք ունի պահանջել վարկի վաղաժամկետ մարում:**
 - ◆ Վերանորոգման վարկերի դեպքում գույքը կարող է հանդիսանալ գրավի առարկա, եթե վարկառուն և/կամ վարկառուի ընտանիքի անմիջական անդամներն ունեն առնվազն 10% սեփականության մասնաբաժին գրավադրվող գույքից կամ ներկայացնում են փաստեր առ այն, որ նրանք բնակվում են այդ տանը:

Վարկի տրամադրում

- ◆ Վարկի դիմումն ընդունվում է Բանկի ցանկացած մասնաճյուղում:
 - ◆ Հիփոթեքի պայմանագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով: Բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը, հիփոթեքի իրավունքը և այլ գույքային իրավունքները ենթակա են պետական գրանցման (վճարների վերաբերյալ տեղեկությունների համար տե՛ս Հավելված 1-ը):
 - ◆ Բանկը վարկ տրամադրելու որոշումը կայացնում է իր հայեցողությամբ՝ հաշվի առնելով վարկային հայտի համապատասխանությունը տվյալ վարկատեսակի հայտարարված պայմաններին, ինչպես նաև գնահատելով այնպիսի էական հանգամանքներ, ինչպիսիք են՝ Հաճախորդի վարկարժանությունը, ժամկետանց պարտավորությունների առկայությունը, գրավադրվող գույքի իրացվելիությունը և այլն:
 - ◆ Բանկը վարկային հայտի վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում և որոշման մասին Հաճախորդին տեղեկացնում է բոլոր անհրաժեշտ
- փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ Հաճախորդի նախընտրած եղանակով:
 - ◆ Վարկը տրամադրվում է անկանխիկ տարբերակով, միանվագ կամ փուլային եղանակով:
 - ◆ Վարկը տրամադրվում է միայն գրավի և ապահովագրության (անշարժ գույքի գրավադրման դեպքում) պայմանագրերը ներկայացնելուց հետո:
 - ◆ Վարկը վարկառուին տրամադրելու ժամկետը՝ գրավի վկայականը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
 - ◆ **Անշարժ գույքի գնահատման և գրավադրման հետ կապված ծախսերը կրում է Հաճախորդը (տե՛ս Հավելված 1):**
 - ◆ **Վարկի հաստատման և տրամադրման համար Բանկի կողմից պահանջվող փաստաթղթերի ձեռքբերման և անհրաժեշտ գործարքների համար վճարվող ծախսերը կատարվում են Հաճախորդի կողմից:**

Վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման չափանիշներ

- 1 Փաստաթղթավորված կայուն եկամուտ, որը համապատասխանում է տվյալ վարկատեսակի տրամադրման նվազագույն պահանջներին
- 2 Դրական վարկային պատմություն, ըստ որի՝ վերջին 12 ամիսների ընթացքում Հաճախորդի բոլոր վարկերի գծով ուշացումների քանակը չպետք է գերազանցի Բանկի կողմից տվյալ պահին սահմանված առավելագույն շեմը
- 3 Վարկային գործընթացի համար անհրաժեշտ լիարժեք փաստաթղթեր

Վարկի տրամադրման վերաբերյալ բացասական որոշման կայացման չափանիշներ

- 1 Վարկը մարելու համար անբավարար կամ չփաստաթղթավորված եկամուտներ
- 2 Վարկի ոչ նպատակային օգտագործում
- 3 Հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում
- 4 Վարկային գործընթացի համար անհրաժեշտ լիարժեք փաստաթղթերի բացակայություն
- 5 Բացասական վարկային պատմություն, ըստ որի՝ վերջին 12 ամիսների ընթացքում Հաճախորդի բոլոր վարկերի գծով ուշացումների քանակը գերազանցում է Բանկի կողմից տվյալ պահին սահմանված առավելագույն շեմը
- 6 Հաճախորդի տարիքը չի համապատասխանում տվյալ վարկատեսակի տրամադրման համար Բանկի կողմից սահմանված չափանիշին

Վարկի վճարումներ

«Հ դրամով վարկերի դեպքում վարկի հաշվեգրված տոկոսագումարները և մայր գումարի ամսական վճարումները կատարվում են ՀՀ դրամով: ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում մայր գումարի ամսական վճարումները կատարվում են ԱՄՆ դոլարով, իսկ վարկի հաշվեգրված տոկոսագումարները կարող են վճարվել ՀՀ դրամով կամ ԱՄՆ դոլարով»

համաձայն Հաճախորդի կողմից տրված գրավոր հանձնարարականի: Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով, մեկ տարվա համար որպես հիմք ընդունելով 365 օր օրացուցային տարին կամ 366 օր օրացուցային տարին՝ նախանջ տարվա պարագայում:

Վարկը կարող է մարվել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

Տարբերակ 1 (դիֆերենցված)

Վարկի հիմնական գումարը մարվում է հավասար ամսական վճարումներով, իսկ ամսական տոկոսագումարները նվազում են ժամանակի ընթացքում՝ հիմնական գումարի նվազմանը զուգընթաց: Այսպիսով, վարկի մարման ողջ ժամանակահատվածում Ձեր ընդհանուր ամսական վճարումները նվազում են:

Տարբերակ 2 (հավասարաչափ)

Վճարման ենթակա գումարները հաշվարկվում են հավասարաչափ ամսական վճարումների սկզբունքով: Այս դեպքում վարկի մարման ողջ ժամանակահատվածի ընթացքում վարկի գծով ամսական ընդհանուր վճարումների մեծությունը մնում է անփոփոխ, սակայն դրանում ներառվող վարկի մայր գումարի գծով վճարումների և ամսական տոկոսագումարների հարաբերակցությունը փոփոխվում է:

Եթե վարկատուի նկատմամբ ունեք չմարված պարտավորություն, ապա Ձեր կողմից պարտավորությունները կատարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ.

Տուժանք → Տոկոսագումարներ → Մայր գումար



Կարևոր նշումներ

- ♦ Հաճախորդների վարկային հաշիվների համար Բանկը վերջիններիս տրամադրում է համապատասխան քաղվածքներ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Հաճախորդները քաղվածքները կարող են ստանալ իրենց փոստային հասցեով կամ էլեկտրոնային փոստով: Անկախ նախընտրած հաղորդակցման եղանակից՝ Հաճախորդները պարտադիր ներկայացման տեղեկատվությունը կարող են ստանալ նաև առձեռն Բանկի ցանկացած մասնաճյուղում: Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանների, ժամկետների և սակագների վերաբերյալ տեղեկություններին կարող եք ծանոթանալ Բանկի՝ «Ծառայությունների Սակագներ» տեղեկատվական ամփոփագրում կամ Բանկի ինտերնետային կայքում՝ այցելելով հետևյալ հղմամբ՝ www.hsbc.am:
Հիփոթեքային վարկերի քաղվածքների և դրանց կրկնօրինակների համար վճար չի կիրառվում:
- ♦ Բանկը կարող է Հաճախորդի վերաբերյալ տեղեկություններ հավաքագրել և տրամադրել HSBC համբի մեջ մտնող ընկերություններին և օտարերկրյա իրավասու մարմիններին՝ ֆինանսական հանցագործությունների ռիսկի կառավարման գործողությունների և հարկային համապատասխանության պարտավորություններն ապահովելու նպատակով՝ հիմք ընդունելով նաև համապատասխան միջազգային կարգավորումները: Նշված տեղեկությունների հավաքագրման և օգտագործման կարգը և պայմանները սահմանվում են Հիմնական Պայմաններին որպես Հավելված կցվող և Հիմնական Պայմանների անբաժանելի մասը կազմող
- «Ֆինանսական հանցագործության ռիսկի կառավարման գործողությունների և հարկային համապատասխանության կապակցությամբ Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման և օգտագործման պայմաններ» փաստաթղթով: Այդպիսի կարգավորումներից է «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտը» (ՕՀՀՀԱ), որն ուժի մեջ է մտել 2014 թ. հուլիսի 1-ից: Այս օրենսդրական ակտը, որի կիրառումն ապահովվում է Միացյալ Նահանգների կառավարության կողմից, ուղղված է հարկային համապատասխանության խրախուսմանը՝ կանխարգելելով, որ ԱՄՆ քաղաքացիներն իրենց եկամուտների և ակտիվների հարկումից խուսափելու նպատակով օգտվեն ոչ ամերիկյան ֆինանսական կազմակերպություններից և օտարերկրյա ձեռնարկություններից:
- ♦ Համաձայն Բանկի գործունեության սկզբունքների, ներքին կանոնակարգերի և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև միջազգային պատժամիջոցների հիման վրա ընդունված ներքին իրավական ակտերի պահանջների՝ Բանկն իրավունք ունի կասկածներ ունենալու դեպքում իր նախաձեռնությամբ ցանկացած հարցում կատարելու (այդ թվում՝ բանավոր) կամ պահանջելու լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր:
- ♦ **Դուք իրավունք ունեք հաղորդակցել մեզ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով:**
- ♦ Շուկայում անշարժ գույքի գների 20% և ավելի չափով նվազելու դեպքում՝ Բանկը կարող է պահանջել գրավադրված անշարժ գույքի լրացուցիչ գնահատում:

Կարևոր տեղեկատվություն վարկային պատմության վերաբերյալ¹⁴

Ի՞նչ է վարկային պատմությունը և ինչպե՞ս է ձևավորվում

Վարկային պատմությունն անձի կողմից ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունն է, որը ցույց է տալիս, թե Հաճախորդն ինչպես է կատարել և շարունակում կատարել իր բոլոր ֆինանսական պարտավորությունները: Այն ձևավորվում է ԱՔՐԱ վարկային քյուրոյի անդամ կազմակերպություններից ստացված տվյալների հիման վրա: Վարկային պատմությունը, որպես կանոն, օգտագործվում է ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում:

Ի՞նչ տեսակի և ի՞նչ վաղեմության տեղեկատվություն է պարունակում վարկային պատմությունը

Վարկային պատմությունը պարունակում է անձի ֆինանսական պարտավորությունների և դրանց կատարման վերաբերյալ հարցման պահին նախորդող 5 տարվա ընթացքում հավաքագրված տեղեկությունները, ինչպիսիք են օրինակ՝

- ♦ ստացած վարկերը, դրանց քանակը և գումարը, յուրաքանչյուր վարկի տեսակը և ժամկետը,
- ♦ վարկային պարտավորությունների կատարումը (օրինակ՝ արդյո՞ք ժամանակին եք կատարել տոկոսների ու մայր գումարի մարումները, թե՛ ոչ),
- ♦ տրամադրված երաշխավորությունները,
- ♦ ժամկետանց վարկերի առկայությունը, ինչպես նաև դրանց համար սահմանված տույժերն ու տուգանքները:

Անհրաժեշտ գործողություններ՝ սխալ կամ թերի վարկային պատմությունը փոփոխելու համար

Վարկային պատմության մեջ սխալ կամ թերի տվյալների առկայության դեպքում վարկառուն կարող է դիմել ԱՔՐԱ

վարկային քյուրոյին պարզաբանման և վարկային պատմությունում ներառված տեղեկատվության ուղղման նպատակով:

Անհրաժեշտ գործողություններ՝ վարկային պատմության վատթարացումից խուսափելու և վարկային պատմության բարելավման համար

Վարկային պատմության վատթարացումից խուսափելու և վարկային պատմության բարելավման համար անհրաժեշտ է,

- ♦ պատշաճ կերպով և ճիշտ ժամանակին կատարել վարկային պարտավորությունները,
- ♦ բացառել ընթացիկ վարկերի գծով պարտավորությունների կատարման ուշացումները,
- ♦ ամբողջությամբ մարել նախկինում առաջացած ժամկետանց վարկային պարտավորությունները,
- ♦ խուսափել խնդրահարույց վարկային պատմություն ունեցող անձանց համար երաշխավոր դառնալուց:

¹⁴ Առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել հետևյալ հղումներով՝ www.abcfinance.am և www.acra.am:

Պահանջվող փաստաթղթեր

Բոլոր փաստաթղթերը ներկայացվում են առձեռն մեր մասնաճյուղերում Բանկի հետ համաձայնեցված ժամկետներում:

Վարկի հաստատման համար դիմումը լրացնելիս պահանջվող փաստաթղթերի ցանկ

- ◆ Վարկի դիմում
- ◆ Անձը հաստատող փաստաթղթի և հանրային ծառայությունների համարանիշի վերաբերյալ փաստաթղթի¹⁵ բնօրինակներ*
- ◆ Տեղեկանք աշխատանքի և աշխատավարձի վերաբերյալ^{16, 17*}
- ◆ Բանկային հաշվի (հաշիվների) վերջին 3 ամիսների քաղվածք(ներ) ^{17*}
- ◆ Ձեռք բերվող անշարժ գույքի առքուվաճառքի գինը հավաստող փաստաթուղթ (օրինակ՝ տեղեկանք կառուցապատողից)
- ◆ Էներգաարդյունավետության վկայական (էներգաարդյունավետ հիփոթեքային վարկերի դեպքում)

Վարկի հաստատումից հետո պահանջվող փաստաթղթերի ցանկ

- ◆ Գրավադրվող անշարժ գույք(երի)ի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական(ներ)
- ◆ Գրավադրվող անշարժ գույքի գնահատման հաշվետվություն¹⁸
- ◆ Նախահաշիվ (բնակելի անշարժ գույքի վերանորոգման վարկերի դեպքում)
- ◆ Գրավադրվող անշարժ գույքի հաջորդող գրավի թույլտվություն (անհրաժեշտության դեպքում)
- ◆ Գրավադրվող անշարժ գույքի սեփականատերերի/ համասեփականատերերի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները

¹⁵ Հանրային ծառայությունների համարանիշի վերաբերյալ հետևյալ փաստաթղթերից մեկը. նույնականացման քարտ, հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական ապահովության քարտ), հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ լիազոր մարմնի կողմից տրամադրված տեղեկանք, հանրային ծառայությունների համարանիշ ստանալու վերաբերյալ լիազոր մարմնի կողմից տրամադրված տեղեկանք:

¹⁶ Բանկում աշխատավարձային հաշիվ ունեցող հաճախորդների համար՝ տեղեկանք գործատուից, որը հաստատում է, որ Հաճախորդի աշխատավարձը կվճարվի Բանկում սպասարկվող իր բանկային հաշվին: Առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Բանկի կայքէջում՝ www.hsbc.am:

Բանկում ոչ աշխատավարձային հաշիվ ունեցող հաճախորդների համար՝ եկամտի աղբյուրները/ չափը հաստատող պաշտոնական ապացույցներ և/կամ փաստաթղթեր, օրինակ՝ հարկային հաշվետվություն, շահաբաժինների հավաստագիր, վարձակալության պայմանագիր, բանկային հաշիվների քաղվածքներ և այլն:

¹⁷ Եթե դիմողը Բանկի Հաճախորդ չէ, ապա նրա բանկային հաշվի վերջին 3 ամսվա քաղվածքները՝ աշխատավարձային փոխանցումներով (աշխատավարձային հաճախորդներ), հաշիվների վերջին 3 ամիսների միջին մնացորդը հաստատող քաղվածքներ (ոչ աշխատավարձային հաճախորդներ), եկամուտը հավաստող պաշտոնական փաստաթղթեր:

¹⁸ Գնահատումը պետք է իրականացվի Բանկի կողմից ընդունելի անկախ գնահատող կազմակերպության կողմից: Բանկի կողմից ընդունելի անկախ գնահատող կազմակերպությունների ցանկը ներկայացված է Նաև սույն տեղեկատվական ամփոփագրի Հավելված 1-ում:

Վարկի նոտարացման և տրամադրման փուլում պահանջվող փաստաթղթերի ցանկ

- ◆ Վարկառուի անձը հաստատող փաստաթղթի և հանրային ծառայությունների համարանիշի¹⁵ վերաբերյալ փաստաթղթի պատճեններ*
- ◆ Վարկառուի ամուսնության (ամուսնալուծության, կնոջ/ամուսնու մահվան) վկայականի բնօրինակը*
- ◆ Միասնական տեղեկանք Կադաստրի կոմիտեից բնակելի անշարժ գույքի նկատմամբ առկա սահմանափակումների վերաբերյալ
- ◆ Գրավատուի անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակ) և հանրային ծառայությունների համարանիշի¹⁵ վերաբերյալ փաստաթղթի պատճեն
- ◆ Վաճառող կողմի անձը հաստատող փաստաթուղթ
- ◆ Դիմում-հանձնարարական ոչ հաշվետեր Հաճախորդի և Բանկի միջև հաղորդակցման կարգի վերաբերյալ (համավարկառուների առկայության դեպքում)*
- ◆ Կառուցապատման փուլում գտնվող գույքի դեպքում՝ գնման իրավունքի վկայական
- ◆ Գնման իրավունքի գրավի գրանցման վկայական (կառուցապատման փուլում գտնվող գույքի դեպքում)
- ◆ Գույքի գրավի գրանցման վկայական
- ◆ Գույքի ապահովագրության վկայական¹⁹

Ելևելով տարաբնույթ հանգամանքներից՝ Բանկի կողմից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

Նշված փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել նաև համավարկառուների և երաշխավորների համար (առկայության դեպքում):

Ֆինանսական տեղեկատու

Ուշադրություն՝ «Զեր ֆինանսական Տեղեկատու» ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է: Մանրամասների համար կարող եք այցելել www.fininfo.am:

¹⁹ Գրավադրված գույքը պետք է ապահովագրվի՝ օգտվելով Բանկի կողմից ընդունելի ապահովագրական ընկերությունների ծառայություններից: Բանկի կողմից ընդունելի ապահովագրական ընկերությունների ցանկը ներկայացված է նաև սույն տեղեկատվական ամփոփագրի Հավելված 1-ում:

Հավելված 1

Անշարժ գույքի գնահատման, գրավադրման և վարկի տրամադրման հետ կապված ծախսեր

Վճարի տեսակը	Վճարի չափը
Գույքի գնահատման վճար	15.000 – 90.000 ՀՀ դրամ
Գրավի իրավունքի պետական գրանցման պետական տուրք և վճար	26.500 ՀՀ դրամ
Ամուսնու կամ կնոջ համաձայնություն	12.000 ՀՀ դրամ
Ամուսնական կարգավիճակի մասին տեղեկանք	5.000 ՀՀ դրամ
Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրվող տեղեկանք գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ	10.200 ՀՀ դրամ
Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վճար	45.000 ՀՀ դրամ
Անշարժ գույքի ապահովագրության արժեք	Գույքի գնահատված արժեքի 0.16%-0.18% ²⁰
Անշարժ գույքի գրավով ապահովված անհատական վարկի տրամադրման միանվագ վճար	Վարկի գումարի 1% (0.5% Plus և Status հաճախորդների համար), առավելագույնը՝ 100.000 ՀՀ դրամ
Նոտարական ծառայության վճար (ներառյալ՝ նոտարական վավերացման պետական տուրքը)	
Միայն գրավի պայմանագրի դեպքում	15.000 ՀՀ դրամ
Գրավի և առուվաճառքի պայմանագրի դեպքում	26.000 ՀՀ դրամ

Վարկի սպասարկման ամսական կամ տարեկան վճար չի կիրառվում:

²⁰ Ցուցիչ սակագին

Բանկի կողմից ընդունելի ապահովագրական ընկերությունների ցանկ

Ընկերություն	Հեռախոսահամար	Հասցե
«Արմենիա Ինշուրանս» ՍՊԸ	+374 (11) 56 04 04 +374 (12) 56 04 04	ՀՀ, Երևան, Վարդանանց փողոց 16, տարածք 1/1
«ԷՖԵՍ» ԱՓԲԸ	+374 (10) 70 08 00	ՀՀ, Երևան, Հր. Քոչար փողոց 35/1
«Նաիրի Ինշուրանս» ՍՊԸ	+374 (60) 50 00 60	ՀՀ, Երևան, Ավետ Ավետիսյան փողոց 116/1 և 116/5
«ՌԵԳՈ Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ	+374 (60) 50 57 57	ՀՀ, Երևան, Կոմիտաս պողոտա 62, տարածք 93-93/1
«ԼԻԳԱ Ինշուրանս» ԱՓԲԸ	+374 (12) 88 88 88	ՀՀ, Երևան, Հյուսիսային պողոտա 1
«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ	+ 374 (60) 54 00 00	ՀՀ, Երևան, «Սիլ Պլազա» առևտրի կենտրոն, Արամի փողոց 3

Բանկի կողմից ընդունելի անշարժ գույքի անկախ գնահատողների ցանկ

Անկախ գնահատող	Հեռախոսահամար	Էլ. փոստ	Հասցե
«ԱԳ Բորսա» ՍՊԸ	+374 (10) 25 27 89 +374 (10) 25 90 31 +374 (94) 01 09 99	agborsa@mail.ru	ՀՀ, Երևան, Նաիրի Չարյան փողոց 22
«ՎԻ ԷՄ-ԱՐ ՓԻ» ՍՊԸ	+374 (10) 58 87 97 +374 (43) 58 87 97	vm-rp@mail.ru	ՀՀ, Երևան, Վարդանանց փողոց, փակուղի 8, շենք 3-226
«ԱՄԻՆՏԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	+374 (10) 43 22 76 +374 (96) 43 22 76 +374 (94) 43 22 76	amintasgroup@mail.ru	ՀՀ, Երևան, Արցախի փողոց 23/6, Տուն Դեպո կոմպլեքս
«Ար Վի Էմ Քոնսալտ» ՍՊԸ	+374 (10) 54 64 90 +374 (98) 94 44 49 +374 (77) 94 44 49	info@rvmconsult.am	ՀՀ, Երևան, Տպագրիչների փող., շենք 9/114



Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

© «ԷՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, 2024:

Բոլոր իրավունքները պահպանված են: